

կնայ ու կը գրէ «հանին զնա յարեւան լերինն, այսինքն ի գլուխ լերինն, յարեւն» (Միոն. 1928. էջ 12): Նազարէթի սրբավայրերու մասին ոչ մի յիշատակութիւն չունինք մեր նախնեաց մօտ: Մատթէոս Ուռհայեցին (էջ 23-27) մէջ կը բերէ հայազգի Յովհաննէս Չմշկիկ կայսեր (969-976) առ Աշոտ Կ. Ողորմած գրած նամակը՝ որուն մէջ (էջ 27) Չմշկիկ ի մէջ այլոց կը պատմէ թէ իր արշաւանաց ժամանակ գացած է Նազարէթ. «ուր գաւետիսն իսկ ի հրեշտակէն լուաւ Աստուածածին Սուրբ Կոյսն Մարիամ»: Տարակոյս չկայ թէ ի հնուան հայ ուխտաւորները այցելած էին նաև Նազարէթ: Այսպէս այցելած է Վարդան վարդապետ Մարթագին ԺԲ. դարուն, և հոն իր աղօթքներէն մին յօրինած է, ըստ խնդրանաց Ս. Յակոբայ վանքին մէջ վանականին: Նազարէթի աւերակներուն մէջ կը տեսնուին նաև երկու հայ անուններ՝ մին Յակոբ, խոշոր սիւնի մը անկիւններէն միոյն վրայ քանդակուած թանձր ու հաստ գրերով. միւսն՝ որ անընթեռնլի է՝ կը տեսնուի եկեղեցիին գաւթին հարաւային պատին ագուցուած քարի մը վրայ: Նոյն անուան գրերը մենատառի գրերու նման իրարու կապուած են: «Յարտեան լերինն» կառուցուած Ս. Չաքարիա անուն հայ վանքի նկատմամբ ալ ոչ մի հայկական յիշատակութիւն չունինք դժբախտաբար. բայց մենք ըստ կարելոյն պիտի ջանանք օտար աղբիւրներով հաստատել նոյն հայկական վանքին գոյութիւնը: :

Գահավիժման լեռը՝ տեղական աւանգութեան մը համաձայն, Նազարէթէն գէպի հարաւ քառասուն վայրկեան հեռի կը գըտնուի. նոյն լերան զագաթը ժայռի մէջ փորուած եկեղեցիի փոքր կողակ մը կ'երևայ, հոն կան նաև հիմեր, մոզայիքներ և ջրհորներ, անտարակոյս ասոնք վաղեմի վանքի մը մնացորդներն են: Տեղւոյն հայոց Ս. Չաքարիայի վանքը ունի պատմական երկու յիշատակարաններ. մին՝ անանուն լատին ուխտաւորի մը յիշատակութիւնը՝ իր 1231ին գրի առած Pelerinages por aler en Iherusalem հին Փրանսերէն լեզուով Ուղեգրութեան մէջ, որուն թարգմանութիւնն է հետևեալը. «Նագարեթե ղիսի գահաւիժման լեռը սկի մղոն է. լեռն վերի ճակարակիս վրայ կը գտնուի Ս. Չաքարիա անունաք մասուն մը որ Հայոց կը վերաբերի և շատ գեղեցիկ տղ մ'է» (Հրատարակիչք՝ H. Michelant et G. Raymond, Itinéraires à Jérusalem. Genève, 1882, էջ 100): Միւս աղբիւրն է Ս. Տեղ-